ամին մեռաւ Եղեծադար (s!) կաթուղիկոսն եւ դարձեալ աշակերտ նոր. եղեւ կաթուղիկոս Նահապետ անուն:

Նոյն գրով.

Թվ. ՌՃԽ. ամին այլ եւ եղեւ յաշտոմն (s!) բարւոք ի մէջ կաթուղիկոսի եւ սր. Գեղարդա Դաւիթ վարդապետին: Ես տր. Սիմոնս գրեցի:

Թ. ՌՃԽԱ. որժամ եկն մորեխն Երեւանա երկիրն, փառք Այ. վնաս չեղեւ:

328բ. Վերեւի լուսանցքում նոյն գրով.

«Թվին ՌՃԼԵ. է. օր կարդացաք:

392–393ա. Ներքեւի լուսանցքում.

Եւ եղեւ այս ինչ իր ոմն Նահապետ անուն եղեւ կաթուղիկոս սրոյն. էջմիածնայ. ահա պատմեմ ասեմ կռկիծ որ եղեւ. այլ ասեմ. Դաւիթ վարդապետ մի կայր առաջնորդ սբ. Գեղարդայ. ահա սրասնունդ (s!) եւ մաքուր զըպարտեալ խիստ թ. ՌՃԽ նոեմբերի ա.ի մէջ գիշերի. ոչ կարեմ ... (մի բառ),

394ա. ի կաթուղիկոսէ, ոչ ի բռնէ., այլ ասեմ խակալէս մուրուս սորա վեր արարել. չարն սատան այսպէս արար ամենի (?):

499ա. Նոտր գրով.

Ես տր. Սիմոնս կրդցի. այս Փիլոն գիրքս. Թվ. ՌՃԽԶ:

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ. 8.

### Բ. Գրքի եր. 111.

### Մխիթար Այրիվանեցու Ճառընտիր

369բ. Գիրք զոր ունին հրեայքն ի ծածուկ. այսոքիկ են.

Ադամա:. Ենովքա:. Սիբէլա:. Բժ. նահապետացն:. Ադաւթքն Յովսէփա:. Վերացումն Մովսիսի:. Ելդադ եւ Մովդադն:. Սաղոմոնի սաղմոսքն:. Եղիաի ծածուկքն:. Դանիէլի է. տեսիլն:

Իսկ ըստ նորոյս:. Գիրք մանկութե. տն.:. Թոմաի աւետարանն:. Յայտնութիւն. Պետրոսի:. Գ:. Շրջագոյ Պաւղոսի:. Կաթուղիկէ թուղթքն. Բառնաբա եւ Յովդաի եւ Թումաի:

Սրբոյն Կղեմա. եթէ ո՞ր գիրք ընդունելի է:

Գործքն եւ կանոնք առաքելոցն:. Յայտնութիւն. Յովհաննու, որ կոչի Պիղալիմսիս: Խրատ Ածածնին առաքելոցն:. Գիրքն Դիոնէսեա Աթենացո:. Տիմոթեա թուղթն:. Գիրքն Կրիսպոսի:. Բանքն Յուստոսի:. Քարոզ ուղղափառացն:. Թուղթն Բառնաբա:. Զայս ես եւ Անանէ գրեցաք ի Վիմի քաղաքի, որ եկեղեցի աւրհնեցաք:

Սրբոյն Եւագրեա, կարգադրութի. Ածաունչ. տառից:

Արարածքն:. Ե.: Յեսուն:. Գ:. Թագաւորութիքն. Դ:. Սաղմոսքն.:. Սգաւնութին.:. Սիրաքն:. Յոբն:. Երկոտասանքն:. Եսաին: Երեմիայն:. Դանիէլն:. Եզեկիէլն:

Աւետարանքն. Դ.: Պը(ր)ակքն:. Առաքեալն. ԺԵ:. Կաթուղիկէքն. է:

Սրոյն. Կիւրղի Եմի. հայ (s!) հայրա: Կարգադրութի. Ածաշունչ. (գրոց?):

Ալիփ:. Ա. Ծնունդքն:. Բեթ. Բ. Ելքն:. Գամեղ. Գ. Ղեւտիկոնն:. Դաղէթ. Դ. Թիւքն:. Հէ. Ե. Երկրորդ աւրէնքն:. Վաւ. Զ. Յեսու, որդի Նաւ:. Զէ. է. Դատաւորքն եւ Հռութն:. Խէթ. Ը. Ա. եւ Բ. Թագաւորութիքն:. Տէթ. Թ. Գ. եւ Դ. Թագօրութիքն:. Յաւտ (գլխին՝ «որդ»). Ժ. Ա. եւ Բ. Մնացորդքն:. Քափ. ԺԱ. Ա. եւ Բ. Եզրն:. Ղամեթ. ԺԲ. Եսթերն:. (Սուրբերոն գիրք, Ե.:) — փակագծի մէջ առնուածի գլխին ջնջման նշան կայ, հինգ գրքերը առանձին առանձին է նշանակել: Մեմ. ԺԳ. Յոբ:. Նուն. ԺԴ. Սաղմոսքն:. Սամքաթ:. ԺԵ. Սգաւնն: է. ԺԶ. Եկլեսիաստէսն:. Փէ. Ժէ. Ահնութիք. ահնութցն.:. Ծադէ. ԺԸ. Երկոտասանքն:. Կոփ. ԺԹ. Եսաին:. Րէշ. Ի. Երեմիայն:. Շին. ԻԱ. Եզեկիէլն:. Թաւ. ԻԲ. Դանիելն:.

Դ. աւետարանքն:. Գործքն:. է. կաթողիկէքն:. ԺԴ. Թուղթն (Պա)ւղոսի:— Յիշեա ի բարի, բարերար (Յս.) գ(ո)ր. Մխ. վդն.: Լէ:*

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Գ. 9.

### Բ. Գրքի եր. 249. ծ.

### No. 2776 (նոյնը կայ No. 2622, 156ա. նոր շեղագրով)

Նամակ

264ա. Ածպետականին. ա. գլխոյ շնորհօք լցեալ եւ հոգոյ նոր. ներընդունակ եղեալ. գլուխ պատուական եւ տիեզերական կթղկս. եւ եպսապետ. հայոց մեծաց տէր Կոստանդին:

Զգիր պատըւական հրամանաց քոց ընկալաք մեք նըւաստ եպեսքս. Սիմեոն. տէր ի Յովաննէ եւ տր. Ստիֆննս. եւ վդպետքս Դաւիթ եւ Եսայի, այլ ա. մեր վդապօքս. եւ վանօրէօքս եւ ապատօք, եւ յորժամ զառանձին գրելքս. տեսաք, որ ձեր սովորական քաղցր հրամանօքդ էիք առ մեզ առաքել. մեծաւ ուրախութբ. լցաք եւ ձեզ յերկարութի. կենաց աղօթեցաք: Իսկ յոր–

---

*Հրատարակուած է Արարատ 1895, 408. բայց ուղղագրական եւ վերջին տողի սխալ ընթերցումներով: «Յս.» բառի Յ–ի ներքեւի կէս մասը եւ ս–ի ներքեւի միացնող գիծը երեւում է: «տր.»–ի առաջին տառի երեք գծերի ներքեւի մասերը եւ ր պարզ, նոյնպէս երեւում են. «Մխ.»–ի առաջին տառի ներքեւի մասը եւ խ–ի բնորոշող կեռի մի մասը նոյնպէս նկատւում է: Այնպէս որ այստեղ «գտր. Վարդան» Արարատի ընթերցուածը հաստատապէս սխալ է եւ սխալ եզրակացութիւնների հիմք կարող է դառնալ: